

որ այս անգամ Տիգրիսի երկու եղեցքներուն վրայ ալ բանակեցաւ, այսինքն գրաւուած Մծբինի ու բարեկամ Կորդուաց երկրին մէջ:

Միգդոնացւոց մայրաքաղաքին առումը, որ վերջին յաղթութիւնն եղաւ Լուկուլլոսի, կարելի է վերջաւորութիւնը նկատել նաեւ անոր հայկական արշաւանքներուն: Այս յիշատակելի գէպքին յաջորդող իրադառութիւնք՝ Լուկուլլոսի համար պարզապէս ձախողանք եղան ու ծանր յուսախարութիւնք. որով նա իւր տարիներու ընթացքին մէջ աշխարհակալած հողամասերը, համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ. մին միւսին ետևեւն դարձեալ թշնամույն թողուլ ստիպուեցաւ, վասն զի՞նախ՝ չյաջողեցաւ իւր ըմբոստ զինուորներուն սէրն ու վստահութիւնը վերաշահչիլ, եւ երկրորդ՝ չկրցաւ չսոսմի մէջ իրեն սիսերեմ հակառակորդ կուսակցութեան հանած հզօր հոսանքին գէմ մաքառիլ, որ ամէն ապօրէն միջոցներով ջանահնար կը լլար իւր տապալումը փութացնել:

Արդ, որովհետեւ յաջորդ տարիներու մէջ տեղի ունեցող պատերազմներու թատերաբեմը չայաստանի հողէն դուրս՝ կրկին ի զոնտոս կը փոխադրուի, այս պատճառաւ մենք եւս հոս վերջակէտը կը դնենք մեր ներկայ ուսումնասիրութեան զուտ պատմական բաժնին:

(Շարունակնի):

Հ. Գ. ԳԱՐԱՆՓԻԼԵԱՆ



ՀՈԼԼՈՒԴԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ժ. Զ. - Ժ. Թ. Դ Պ Բ Ե Ր Ո Ւ Մ

(Շարունակութիւննի):

Ե.

Ցպարանի վերականգնումը Ամստերդամում 1685 ին: Մատթէոս Յովհաննիսեան եւ իր տպարանական վաւերագիրները: Վանանդեցիների տամամեայ գործունէութեան շրջանը: Թումաս արքեպիսկոպոս եւ զուկաս Վանանդեցինուրիշանեան: Թումասի կտակը: 1695—1705 տպուած գրքերն եւ նրանց յիշատակարանները: Թումասի մահը:

—

Ղոկանի հեռանալուց յետոյ, մօտ 15 տարի Ամստերդամում տպարանը դադարեց գործե-

լուց, բայց 1685 ին վերստին սկսեց աւելի մէծ եռանդով եւ աւելի ընդարձակ կերպով: Այս նոր գործունէութիւնը ամբողջապէս Յանանդեցու ենք պարտական, որոնք Ամստերդամի հայ գաղութի փառքն են կազմում, մանաւանդ մէկը, Ղոկասը:

Երբ Ոսկան վախճանուեց, նրա քեռորդին Սողոմոն Լեւոնեան տպարանի վարչութիւնն իր վրայ առնելով 4 գիրք Հրատարակեց Մարսիլիայում: Գործը սակայն, այնուհետեւ մէծ անյաջողութիւնների հանդիպեց, գլխաւորապէս կրնական տարբերութիւնների եւ ներքին վէճերի պատճառով, թէ Գաղղիայում եւ թէ մասնաւանդ իտալիայում եւ նոյն իսկ դատերի առարկայ դարձաւ, որով Սողոմոն ստիպուած եղաւ տպարանը վերստին տեղափոխել Ամստերդամ, ուր ամէն աղատութիւն ապահովուած էր իրեն: Այս պարագան յայտնի է նաեւ հոլլանդացի պատմագրին, որ գրում է «Ոսկան 1670 ին իր տպարանը Մարսիլիա տեղափոխեց, բայց այնտեղ նրա տեւողութիւնը երկար չեղաւ: Հայերի իրար մէջ ունեցած ներքին տարածայնութիւնները, որոնց մէջ խառն էր նաեւ Ոսկան եպիսկոպոս, վերջի վերջոյն պատճառ դարձան տպարանի փակման...»: Նոր վէճերի առաջն առնելու համար հայերը լաւագոյն համարեցին տպարանը դարձեալ Ամստերդամ բերելու²: Այս անգամ տպարանի ղեկավար ու տէր դարձաւ Մատթէոս Յովհաննէսի հաննէսեան Վանանդեցին, որ թէ հմտւ գրաշար էր եւ թէ առհասարակ լաւ տեղեակ արուեստին, քանի որ 14 տարի գործել էր այս ասպարէզում նախ Ոսկանի եւ ապա Սողոմոնի մօտ: Ահա ինչպէս է պատմում ինքը Մատթէոս իր ձեռնարկութիւնը, Ամստերդամում 1685 ին իր տպած առաջին գրքի, Շարականի յիշատականութեան:

«Ես նուասսո յամենից Մատթէոս դպիրս՝ եկի ծառայելու ընդ արենակից վարդապետին իմայ յերկիրն յիտալացոց եւ ի մայրաքաղաքն չոռմ, եւ վեհն իմ (Ոսկան եպիսկոպոսի մասին է խօսքը) գնաց յայլ ուրեք, եւ ես դարձայ յԱլիկոնոյ առ ոսս աշակերտի տեառն Ոսկանայ արհիեպիսկոպոսի տեառն կարապետի վարդապետի, եւ ուսայ ի նմանէ զարհեստ շարարապետութեան եւ մնացի ընդ վեհն Ոսկանայ ար-

¹ Վանանդ գեղը գտնուում է Գողթան գաւառում, Ագուլսից մօտ 14 կիլոմետր հեռու: Որա բնակչները նոյն ձեռնարկու ողին ունեին ինչ որ առհասարակ ազուլեցիք եւ ցրուած էին զանազան կողմեր, գործունեութեան առպարեզ գիտուելու:

² Bibliothekleven 1924, Nr. 3, Utrecht.

Հիեպիսկոպոսի եւ քեռորդւոյ նորա Սաղոմնի ամս չորեքտասան եւ վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ. քանզի եւ տէր Յակոբ կաթողիկոսն գրեաց առ իս ի Մարտիլեայ թէ ընկալայ զհամբաւդի ի քէն զբարւոք ուսանիլն զարհեստիդ. վասն որոյ եւ զփաքր նամակս օրհնութեան առաքեցի առ հոգեւոր որդեակդ իմ Մատթէոս, զի բարւոք ծառայիցես տեառն Ոսկանայ արհիեպիսկոպոսի աշակերտի իմց եւ զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս. այնպէս համարեալ թէ ինձ ես արարեալ որպէս ասէ Տէրն. եւ ես զքոյ վարձն հատուցանելցոց եմ. եւ թէ մահ հասարակաց հանդիպի զշեանամայ նստող սրբոյ աթոռոյն պարտին հատուցանել: Ակս որոյ ժամանակս բաղումն ծառայեցի եւ զկնի փոխելցն նոցա առ Աստուած, եւ իմ տեսեալ զչարակրութիւն եւ զանաջողութիւն յամենայն կողմանց, վասն որոյ դիմեցի յերկիրն Հոլլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքն ՅԱմստէլօտամ, եւ գտի զաւ վարպետ իմն, որ անուամբ նիկոլայուս ասի եւ ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք եւ զայլ տեսակս եւս գրոց նօտրի եւ բոլորի: Եւ ի աւարտման գործոյս՝ ոչ ունելով բաւականապէս զդրամն վասն տպելցոյ զգիրս, եւ ընկերացայ ընդ տեառն Յոհաննու երեւանցւոյ սրբանուէր քահանայի եւ ընդ զուղայեցի պարոն Պողոսին սակս երկուց գրոց միան՝ Շարակնոցի եւ ժամագրբի՞ն:

Մատթէոսի յիշած ընկերներն էին՝ գաղութի հոգեւոր Հովիւր՝ Յովհ. քահ. Աւղուրեան երեւանցին եւ ջուղայեցի վաճառական Ալեքսան Պողոսեան: Տպարանն ի սկզբան շատ լաւ գործում է, բայց շատ չանցած թիւրիմացութիւնն ու վէճերը սկսում են ընկերների մէջ, որոնք յանգում են գատավարութեան: Այս վէճերի մասին մի քանի նոտարական արձանագրութիւններ կան, որոնք ցոյց են տալիս այն ժամանակի տպագրական գործի ինչպէս եւ գրքերի վաճառման հանդամակները, ուստի աւելորդ չենք համարում յառաջ բերել, թարգմանելով հոլլանդերէն բնագիրներից.

1. Ալեքսանի զանգատները.

“1694 Մարտ 3. վաճառական Alexan Bogos կամ Paolo՝ գանգատ ներկայացրեց Օաննես դ'Օգորլու հայ քահանայի դէմ, որ հիւանդ պառկած է իր տունը”:

“Գանգատաւորը յայտնեց թէ հայ քահանան, Matteo Joannes եւ ինքը՝ ընկերութիւն են կազմել հայերէն լեզուով գրքեր տպելու եւ ծախելու, — շահելու նպատակով: Նրանք հրատարակել են մինչեւ հիմայ 8300 օրինակ զա-

նազան գրքեր, որոնցից 6000 օրինակը՝ Ալեքսան իր ընկերների հաւանութեամբ Զմիւռնիա է տարել ծախելու, բայց մեծ դժբախտութեան է հանդիպել: Զմիւռնիայում տեղի ունեցած մեծ երկրաշարժի ժամանակ նա կորուցել է իր բոլոր ունեցածն, ի մէջ այլոց նաեւ այդ գրքերը, բաց ի մի քանի հատից, որոնց վաճառման արդիւնքը գործ է ածել իր ապրուստի համար: Երբ Ալեքսան Զմիւռնիայից դարձել ու իր գլխին եկած փորձանքը պատմել է, մեղագրեալը (քահանան) տուել է իր հաճութիւնը եւ միմիթարել է նրան: Բայց այստեղ մնում էր 1600 օրինակ հայերէն գրքեր, որոնց երրորդ մասը պատկանում է իրեն, Ալեքսանին, որն եւ պահանջել է Ուղուրլեանից, բայց սա մերժել է տալ:

Մեղագրեալ քահանան 1694 Մարտի 5ին Ալեքսանի այս գանգատը նոտարի միջոցով ստանում է եւ պատասխան է ուղարկում թէ ինք հիւանդ պառկած է եւ անկարող է գործի մասին խօսիլ:

“Նոյն Ալեքսանը քիչ յետոյ գանգատ է տալիս միւս ընկերի, Մատթէոսի վրայ: Ահա ինչ է ասում այս գանգատը.

“1694 Յուլիս 20. Գանգատ հայ վաճառական Paolo Alexanի կողմից Matheus di Novannesի դէմ”:

“Ալեքսան կանոնաւոր հաշիւ է պահանջում Մատթէոսից այն հայերէն գրքերի համար, որոնք տպուել են ի հաշիւ Յ ընկերների, Յովհ. քահ. Աւղուրեանի, Մատթէոս Յովհաննէսիւանի եւ գանգատաւոր Ալեքսանի: Ալեքսան յայտնում է թէ դուք, Մատթէոսդ, ծախել էք գրքերը, օգտուել էք դրանից եւ նրա բաժինը չէք տալիս: Բայց դրանից դուք պարտաւոր էիք պահել մամուլը, տառերն եւ այլ տպարանական իրերը”:

“Մեղագրեալը, Մատթէոս, պատասխանեց թէ երբ իր կատարած ծախերը հանէ, այն ժամանակ պատրաստ է օրինաւոր հաշիւ ներկայացնելուն”:

“Նոուար D. Van Liebergen”:

2. Մատթէոսի պահանջը.

“1694 Դեկտ. 2. ներկայացան իմ, François Tixerandet Ամստերդամի նոտարիս առջեւ, վկաներ՝ պպ. Gerrit Huijgens 75 տարեկան, Thomas Clapheck 49 տարեկան եւ Gaspar Steen 53 տարեկան, երեքն էլ կազմարաներ եւ ի ներկայութեան հայ տպարանատէր Matteo Joannesի հանդիսաւորապէս եւ Ճշմարտապէս յայտնեցին թէ ինչ էր այս վերջինի պահանջը: Gerrit վկայեց թէ 8 կամ 9 տարի յառաջ

(Ճիշդ չեց յիշում) պահանջատէր Matteoի հետ գտնվում էր Nicolaesի տունն, որին Մատթէոս պատուիրեց մի շաբք տպարանական իրեր, մասնաւ եւ տառեր եւ Nicolaes Kis յանձն առաւ շնել Մատթէոսի ուղած իրերը: Այս բանականութիւնը տեղի ունէր իր, Gerritի միջոցով:

"Thomas Clapheck վկայեց թէ ինք Զ տարի յառաջ պահանջատիրոջ հետ էր, երբ սա գնեց այրի Christoffel Conradusից մի տպագրական մամուլ 150 ֆլորինի եւ այս գումարը Մատթէոս լիովին վճարեց նրան:

"Gaspar Steen էլ վկայեց թէ ինք 2 տարի յառաջ հայ քահանայ De Ogorlenից խնդրել է, որ տպարանական մամուլը ծախէ կամ փոխտայ իրեն, բայց քահանան պատասխանել է թէ չէ կարող ոչ ծախել ոչ փոխ տալ:

3. Կայացած համաձայնութիւնը.

Հայ տպագրական գործիչների այս գանգատաները բնականաբար յուզել են հայ գաղութը, որ իրաւունք ունէր դժգոհ մնալու, ուստի ազգեցիկ վաճառականներ միջամտել են եւ յաջողել են գործը հաշտութեամբ կարգադրելու, ինչպէս վկայում է հետեւեալ վաւերագիրը:

"1695 Ապրիլ 15.

"Կերկայացան պարոններ Charriman di Morat, Persich di Moceta, Vangely di Panos եւ Pietro di Girakos, բոլորն էլ այս քաղաքում հաստատուած հայ վաճառականներ եւ թարգմանի միջոցով վկայեցին թէ այս Ապրիլի 1 ին վերոյիշեալ Charrimanի (Հայրիման) տանն էին գտնվում իրենք եւ Alexan Paolo ու Matheo Joannes հայերն: Այստեղ այս երկուքի մէջ՝ հայերէն գրքերի վերաբերեալ իրենց մէջ ունեցած վէճը հետեւեալ կերպով վերջացրին: Մատթէոս՝ 14 օրուան ընթացքում Ալեքսանին պիտի յանձնէ 600 օրինակ երածշտական գիրք (Հարական) եւ պիտի պահէ իր բաժինը տպարանական ինչքի մէջ. իսկ Ալեքսան պիտի վճարէ Մատթէոսին 325 Rijksdaalder¹, :

"Սրանք էլ (Ալեքսան եւ Մատթէոս) հանդիսաւորապէս յայտարարեցին թէ այս եղանակով են կարգադրած իրենց վէճը: Այս ձեւի յայտարարութիւնը հայոց մէջ հաւասար է եղել ծանը երգման...":

"Ամստերդամի նոտար Tixerandet."

Իսկ Ռուզուրլեան քահանայի հետ միայն 4 տարի վերջն է հաշտութիւն կայանում, որի մասին հետեւեալ արձանագրութիւնն է կազմուել.

¹ Մէկ Rijksdaalder արժէր 2 ֆլ. 50 սենտ, գումարը = 812,90 հոլանդական ֆլորին:

"1699 Յուլիս 7.

"Կերկայացաւ Պ. Martin Grigory, որ բնակվում է այստեղ եւ անձամբ ծանօթ է ինձ, նայայտարարեց թէ ինքն իբրեւ փոխանորդ Ալեքսանի ստացած է հայ քահանայ Ուղուրլեանից հայկական տպագրական մամուլը, տառերն եւ գործիչներն, որով Ալեքսան այլեւս որեւէ պահանջ չունի քահանայից":

"Նոտար J. Bronw¹:

Այս վէճերն ու գանգատաները բնականաբար վատ ազգեցին տպարանական գործի վրայ: Մատթէոս իր ընկերների հետ, ինչպէս տեսանք, տպել էր Շարական եւ ժամագիրը: Նա առանձին 1686 ին տպեց Խորենացու Պատմութիւնն եւ Աշխարհագրութիւնն, 1688 ին երկրորդ անգամ ժամագիրը եւ ապա ստիպուեց դադրեցնել իր գործունէութիւնը: Կա անկարող էր շարունակել մի կողմից վէճերի, միւս կողմից անձնական նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Եթէ նա մինակ մնար, անշուշտ ստիպուած պիտի լինէր վերջ տալ բոլորովին իր սիրած գործին, բայց բարեբախտաբար նրան օգնութեան հասան Յ ուրիշ Վանանդեցիներ՝ իր հօրաբրոջ որդին թումաս եպիսկոպոսը, գողթան գաւառի Ս. Խաչ վանքի վանահայրը, եւ սրա եղբօրորդիքը Ղուկաս եւ Միքայէլ Նուրիջանեանները: Ընորհիւ սրանց՝ տպարանը վերակազմուեց նոր տառերով եւ գործիչներով: Թումաս եպիսկոպոս գարձաւ սեպհականատէր եւ միանդամայն ղեկավար, Ղուկաս Վանանդեցին՝ ընկերութեան գլխաւոր գործողն եւ մտաւոր ոյժը եւ սկսեց մի նոր փայլուն շրջան, որ ամբողջ 10 տարի տեւեց անընդհատ: Մատթէոս Յովհաննէս կողմանութիւնն եւ հմտութիւնը յայտնապէս երեւում է նրա բոլոր տպագրած գրքերի վրայ, որոնք տպարանական արհեստի տեսակէտից ընտիր արտադրութիւններ են:

Վանանդեցիներն այս 10 տարուան ընթացքում 14 գիրք են հրատարակած, բոլորն էլ նշանաւոր իրենց կատարելութեամբն եւ օգտակարութեամբը, ի նկատի առնլով ժամանակի հանդամանքները: Մի հետաքրքրական վաւերագիր կայ վանանդեցիների այս գործունէութեան մասին, որ իսկապէս թումաս եպիսկոպոսի կտակի բնաւորութիւնն է կրում եւ որը մենք ամրող-

¹ De Boekhandel te Amsterdam voor namelijk in de 17th Eeuw, door M. M. Kleerkoper, aangevuld en mitgegeven door W. P. Van Stokum. 's Gravenbage 1914. (Գրավաճառութիւնը Ամստերդամում Ժէ. Դարում, Հաւադ 1914, էջ 773, 1124—1126).

ջապէս տալիս ենք ստորեւ։ Այս նոտարական գիրը յօրինուած է լատիներէն, բայց մենք բնադրիր չենք տեսել, այլ աչքի առաջ ենք ունեցել նրա հոլլանդերէն թարգմանութիւնը։

Ահա այդ վաւերագիրը։

“1705 Հոկտեմբեր 30: Կերկայացաւ իմ, Hendrik de Wilde, Ամստերդամի նոտարիս առջեւ, գերապատիւ Տէր Թոմաս Վարդապետ, արքեպիսկոպոս Սուրբ Խոչ վանքի, որ գտնվում է Հայաստանի Գութան (=? Գողթան) գաւառում եւ յայտնեց թէ ինքը, 10 տարուց ի վեր, այն է 1695 ից սկսած այս քաղաքում (Ամստերդամ) հաստատած է իր ազգի ծառայութեան եւ պէտք երին նուիրուած մի տպարան, բոլոր հարկաւոր պարագաներով, յատկապէս հայերէն լեզուով՝ գրէեր եւ քարտէսներ հրատարակելու համար եւ թէ այս տպարանում իր ծախով տպել է հետեւեալ գործերը։

1. Կախ եւ յառաջ 1695 ին մի մեծ աշխարհացոյց քարտէս Adrian եւ Pieter Damian Schoonebeek եղբայրների ձեռքով պղնձի վրայ փորագրուած։

2. Կոյն տարին մի գիրք, հայ ազգի ծագման, պատմութեան եւ հայենիկի վրայ, որի հեղինակն է Moses Grammaticus անունով հայը (Մովս. Խորեն.), in octavo։

3. 1696 ին մի գիրք, որ ծառայում է իրը ուղեցոյց վերոյիշեալ աշխարհացոյցին, որ կազմել է իր եղբօրորդին Lucas Gregory։

4. Կոյն տարին թոմաս Կեմպացու “Նմանութիւն Քրիստոսի”, գիրքը, Lucas Gregoryի մեկնաբանութեամբ, in duodecimo։

5. 1697 ին մշտատեւ Տարեցոյց (Almanack) որ կազմել է Կոյն Lucas Grigoryն, in duodecimo։

6. Կոյն տարին մի գիրք, որ կոչվում է Գանձ վաճառականների համար, Lucas Grigoryի հեղինակութեամբ, in octavo։

7. 1698 ին Կոյն Կտակարանը, պղնձեայ տախտակի պատկերներով զարդարուած, եւ Կոյն Lucasի ձեռքով կարեւոր մեկնութիւններով լուսաբանուած, in duodecimo։

8. 1699 ին մի գիրք, որ կոչվում է Ռուկի գուռ հայ մանուկների համար, Կոյն Lucasի հեղինակութիւնը, in octavo։

9. Կոյն տարին մի ամէնօրեայ Աղօթագիրը հայոց համար, գարձեալ Lucasի հեղինակածը, in octavo։

10. 1702 ին հայերէն մի երաժշտական գիրք in octavo (Ծարակնոց)։

11. Կոյն տարին Օդերեւութաբանութեան վրայ մի գիրք Կոյն Lucas Gregoryի հեղինակութիւնը, in octavo։

12. 1704 ին մի գիրք աստուածաբանական ինդիրների վրայ, in octavo։

13. 1705 ին, Breviarium vel horologion ecclesiae Armeniae (Ժամագիրք), in octavo։

14. Կոյն տարին մի գիրք, որի վերնագիրն է “Առաջնորդ Երկնից”, լատիներէնից թարգմանուած Լեհաստանի Վարդան արքեպիսկոպոսի ձեռքով, in octavo։

“Այս տպարանն իր բոլոր պարագաներով, թոմաս արքեպիսկոպոս սարքել է ի սէր Գիտութեան եւ ի սէր ծառայութեան իր Ազգին եւ բոլոր գրքերնու քարտէսները հրատարակել է իր անձնական միջոցներով, ի բաց առեալ նրանցից, որ տպել է ուրիշների հաշուին։ Յիշեալ գերապատիւ արքեպիսկոպոսը յայտարարեց թէ իր տպարանը բոլոր առարկաներով եւ բոլոր տպուած գրքերը, նա մտադիր է թողնել իր սիրեցեալ հայենիքին, որպէս զի այն խեղճ քրիստոնեաներն, որոնք գեռ գտնվում են իսւարի մէջ եւ սատանայի Ծի տակ, լուսաւորուին։”

“Յիշեալ տէր արքեպիսկոպոսը ինձ ներկայացրեց երկու յանձնարարական գրութիւն իր տպարանի վերաբերմամբ, իբրեւ իր քրիստոնէական եռանդին ապացոյց։ Դրանց մէկը հանգուցեալ ամենողորմած Լէոպոլդ Կայսրից է տրուած, Վիեննայում, 1697 Սեպտ. 5 ին. միւսը պարոն Augustus Hermanns Frantiusի կողմից, որ Մագդեբուրգի մօտ Hall քաղաքի ուսուցչապետ է։”

“Եւ որպէս զի այս իրողութիւնը յայտնի դառնայ եւ ամէն տեղ իբրեւ Ծմարտապէս կատարուած ընդունուի, արքեպիսկոպոսը Michael le Blon եւ Cornelis van Born վկաների (Ամստերդամի գրավաճառներ) ներկայութեամբ այս յայտարարութիւնն արաւ եւ ինդիրեց որ Ամստերդամում հարկ եղած օրինաւոր վաւերագիրը շնուի։”

Այստեղ ամէնից առաջ աչքի է լնինում այն ընդարձակ մասնակցութիւնն, որ ունեցել է այդ հրատարակութիւնների մէջ Պուկասվանանդեցին Կոյն հայութեան, որ իր հօր անունով Grigory է կոչուած, թէ իբր հեղինակ թէ իբր թարգմանիչ եւ թէ իբր մեկնաբանող Կարեւոր է եւ այն, որ տպուած գրքերը մեծ մասով թոմասի ծախովն են կատարուած եւ մի քանիսը միայն “Ճախիւք եւ արդեամբ” Զուղացից վաճառականների։”